

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԻԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

Մագիստրատուրայի ընդունելությանը կազմակերպելու նպատակով ՀՊՄՀ ռեկտորի հրամանով ձևավորվում է մանդատային հանձնաժողով:

Մագիստրատուրայի ընդունելությունը իրականացվում է **երեք** փուլով:

Առաջին փուլով.

ա) առկա ուսուցման համակարգում մագիստրատուրայի ընդունելությունն ըստ մասնագիտությունների իրականացվում է ՀՀ կառավարության կողմից հաստատված պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերի,

բ) ընդունելությանը կարող են մասնակցել ՀՊՄՀ բակալավրի կրթական աստիճան ունեցող տվյալ տարվա շրջանավարտները, ովքեր ավարտական աշխատանքի պաշտպանությունից և ամփոփիչ ատեստավորման քննությունից ստացել են բարձր միավորներ,

գ) մագիստրատուրայի ընդունելության փաստաթղթերն ընդունվելու են առցանց՝ **dimord.aspu.am** կայքի միջոցով, 2021թ. հունիսի 8-ից մինչև հունիսի 25-ը, մրցույթի արդյունքները կամփոփվեն հունիսի 30-ին,

դ) ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով՝ մանդատային հանձնաժողովի երաշխավորության հիման վրա: Մրցույթն անցկացվում է հետևյալ չափանիշների առաջնահերթությամբ.

- նախորդ ուսումնառության ծրագրում ցուցաբերած ընդհանուր առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով (ՄՈԳ),
- մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով,
- տպագրված կամ տպագրման ընդունված գիտական աշխատությունների, թեզիսների և զեկուցումների առկայությունը,
- ոչ մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով:

Երկրորդ փուլով.

ա) առկա ուսուցման համակարգում մագիստրատուրայի ընդունելությունն իրականացվում է ըստ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերի,

բ) ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերի մրցույթին կարող են մասնակցել ՀՊՄՀ նախորդ տարիների, ինչպես նաև ՀՀ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված (ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած)

ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցող դիմորդները,

գ) փաստաթղթերի ընդունելությունն իրականացվելու է առցանց՝ **dimord.aspu.am** կայքի միջոցով, 2021թ. հուլիսի 1-ից մինչև օգոստոսի 20-ը, հարցազրույցները անցկացվելու են ս/թ. օգոստոսի 23-28-ը, իսկ մրցույթի արդյունքները կամփոփվեն օգոստոսի 31-ին:

Երրորդ փուլով.

ա) հեռակա ուսուցման համակարգում ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերի մագիստրատուրայի մրցույթին կարող են մասնակցել ՀՊՄՀ նախորդ տարիների, ինչպես նաև ՀՀ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված (ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած) ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցող դիմորդները,

բ) հեռակա ուսուցման համակարգում մագիստրատուրայի փաստաթղթերի ընդունելությունն իրականացվելու է առցանց՝ **dimord.aspu.am** կայքի միջոցով, 2021թ. հուլիսի 1-ից մինչև օգոստոսի 20-ը, հարցազրույցները անցկացվելու են ս/թ. օգոստոսի 23-28-ը, իսկ մրցույթի արդյունքները կամփոփվեն օգոստոսի 31-ին:

1. Մասնագիտության փոփոխման պարագայում, ՀՊՄՀ կամ այլ ՄՌԻՀ-երի շրջանավարտների ընդունելությունը իրականացվում է միայն վճարովի համակարգում:

2. Այն դիմորդները, ովքեր **չունեն մանկավարժի որակավորում**, բացի մասնագիտական հարցազրույցից, պետք է հանձնեն նաև մեկ միացյալ հարցազրույց մանկավարժություն (ոչ մասնագիտական) և հոգեբանություն (ոչ մասնագիտական) առարկաներից:

3. Օտարերկրյա քաղաքացիները և ՀՀ քաղաքացիություն չունեցող անձինք մագիստրատուրա կարող են ընդունվել միջպետական և միջգերատեսչական պայմանագրերի կամ համաձայնագրերի հիման վրա՝ լրացուցիչ տեղերի հաշվին, ինչպես նաև վճարովի հիմունքներով՝ սեփական նախաձեռնությամբ:

4. Մագիստրատուրայի վճարովի համակարգ ընդունված դիմորդների հրամանագրումը կատարվում է մինչև ս/թ. սեպտեմբերի 10-ը ուսման վարձի առնվազն ամսական չափաբաժինը վճարելուց հետո: